600.0191.07.06.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունիսի 2013 թվականի №191Ա
ք. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №272Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 5.059 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 6.071 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 3618.62 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 4342.34 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 30.983 դրամ/կՎտժ՝առանց ավելացված արժեքի հարկի և 37.180 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 850.01 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1020.01 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 30.983 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 37.180 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 14.662 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 17.594 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 1824.96 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2189.95 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 6.834 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 8.201 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 260.99 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 313.19 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.776 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.931 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 653.16 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 783.79 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 33.4 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 40.08 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած

էլեկտրաէներգիայի քանակի համար)՝ 1.0657 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.2788 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 1.0657 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.2788 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

8) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 98.5264 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 118.2317 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 0.1892 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.2270 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը.

9) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 13.0262 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 15.6314 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման սակագինը՝ 0.0250 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.0300 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 22-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» №47Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 7-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱՁԱՐՅԱՆ

ք. Երևան
7 հունիսի 2013թ.